ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ յօդուածները կրճատում է, ենթարկում փոփոխութեան և չը տպելիք (երկը Ներսից պակաս) չէ վերադարձնում. Անձնական տեսակցութիւն խմբագրի հետ երեքշաբթի եւ ուրբաթ առաւօտ ժ. 11—12։ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ Թիֆլիս Մաղաղեան փ. տ. № 5, բաց է ամեն օր (բացի կիրակի և տօն օրերից) առ 10 ժ. մինչև 2-ը ետօրից յետոյ։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ընդունւում է ամեն լեզուով Դեղափնջիկի երեսի մի քառորդական տողը առաջին երես 40 կոպ. վերջին երես 25 կոպ մանրատառ (պըետիտ)։ Արտասահմանից ԿՐԿՆԱԿԻ։ Շատ անգամ կրկնուող յայտարարութիւնների առանձին համաձայնութեամբ։

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ 1907 Թ. №№ 3-4 ՏԱՄՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԱՐՏ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ցեխ

1. Թագաւորաց ժողով-պրեց ՀԱՅՈՑ ՀԱՅՐԻԿ
2. Լուսաւորչի ճբա. տօնը
3. Վեհափառ Հայրիկի ժաքերից
4. Ռրոզա (երկը. գրծ. շար. Tigo
. ձշդրտատառիւն լեզ. Փորոշ. Թար. Եգիպտ
5. Նապոլէօն I հրաժարումը գահից Լէօնիէ
6. K. P. բանաստ. Թարգ. Ն. Վ. Տ. Ալեախք.
7. Կառնիներ. Մանուկեան

ՏԱՐԱԶ

9. Հայոց Հայրիկի կեանքից ժող. Ն. Վ. Տ. Ա.

ԱՐԻԵՍՏ

10. Կոմիկ. նկար. պատկերաս. —Աբելեանական.

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

11. Տեղեկութիւններ այն աշխարհից

ՏԱՓԱԿ ԶՐՈՅՑՆԵՐ

12. Յայտարարութիւն

ՊԱՏԿԵՐՆԵՐ ԵՒ ՆԿԱՐՆԵՐ

1. Հայոց Հայրիկը Օշականում
2—8. Թագաւորաց ժողովի էդւարդ, Վիլհելմ, Ֆրանց Յովսէփ, Աբդուլ Համիդ, Կայսր Նիկոլայ Բ., Լէօպոլդ.
9. Ազգային թանգարան
10. Բառանիկ այգու պարիսպը Թիֆլիսում.

11. Արծաթի Վասպուրականի բունը
12. Լուսաւորչի խոր վիրապը
13. Սովարուկ Մուսա լեռը.
14. Մայրական օրհնութիւն։
15. Արջունայի տպարանքը.
16. Բէթհովէն
17. Վերհշչագին
18. Տ. Սիրանոյշ
19. Յովհաննէս Նալբանդեան
20. Անդրկասպեան երկրի տեսարաններից
21. Յիսուս Տիվերիական լճի վրայ քարոզելիս՝ նկար՝ Վերհշչագինի
22. Նապոլէօն I անկումը։
23. Գալիցին
24. Մարտ.
25. Աւրիլ.

ՅԻՍՈՒՍ ԽԱՉԱԿԻՐ

ԸՆՏԻՐ ԵՒ ՆՈՒԻՐԱԿ ՄԵԾԱԴԻՐ ՆԿԱՐ
Պատրաստած Պարիզում
(ամենամեծ)
Գինը մինչև Զատիկ

Ադրբիւրն եւ գեղափնջիկն բաժ. համար	*2ր. 50կ.*
Չոլ պարս. տիւս բոլոր թեր. բաժ. համար	*2ր.*
Հինգն էլ մի թերթի հրատարակչի համար	*3ր.*
Զատկական ամենի լաւ նկարը համար	*5ր.*

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԻԿԸ ՕՇԱԿԱՆՈՒՄ

ՎԱՃԵԼՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՂ

ԱՊՐԻԼ

Ս-ԲՂԴԱՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՂԵՒՈՆԴ ԵՐԷՑ ՕՐՀՆՈՒՄ Է ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԴՐՕՇԱԿԱԿԻՐ ՎԱՐԴԱՆԻՆ ՊԱՏԿԵՐԸ ԱՂԲԻՒՐԻՆ ԵՒ ԳԵՂԱՓՆՋԻԿԻՆ

Նոր աւօթաղբող բաժանորդները կարող են առնել, վճարելով 1ր., նոյնպէս և նրանք, որոնք իրանց բաժանորդագինը մինչև մարտի 31-ը լրիւ վճարած չեն եղել և վճարում են ապրիլի ընթացքում։

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԻԿԸ ՕՇԱԿԱՆՈՒՄ պատկերը ամբողջ ապրիլի ընթացքում ձրի կուտարկւի ԱՂԲԻՒՐ ԳԵՂԱՓՆՋԻԿի նոր բաժանորդներին, նոյնպէս և մեր մեր վճարողներից նրանց, որոնք լրիւ կը վճարեն իրանց տարեկան բաժանորդագինն այս ապրիլի ընթացքում։ Մարիսից նոր բաժանորդները կը ստանան թէ Ս-ԲՂԴԱՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ և թէ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԻԿԸ ՕՇԱԿԱՆՈՒՄ պատկերներից։

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԻԿԻ ԿԵԱՆՔԻՑ

ՔԱՐԱՊՏԵՐԻՍՏԻ

Հայրիկ Էջմիածին գալուց ակսեց շատ հաստարակ ձևով և սաբաժամ մանել ամեն կարգի մխարանների խցերը և դրցուէլ. ամեն տեղ ընդունուած էր չայ կամ ջուր. մի քանի ամիս այդ պիտակական այցելութիւններից չետոյ նկատելով մխարանների անկազմը և ոռնիկով ապահովուած կենացարը՝ նա այս կարծիքը յայտնեց: Վարպետներ, եպիսկոպոսը չգիտի ունենայ ոռնիկ, պատրաստուած հոգ, նա իր աշխատանքով պիտի հարկ իւր հացը, ապրուստը, ամեն կարիքները, իսկ նրա աշխատանքն է րրիստոնէութիւն ուսուցանել, բարոզել, խրատել, կրթել ժողովրդին Քրիստոսի հանգարտութեամբ գնալու: Կրթուած ժողովուրդն էլ անշուշտ կրկերակրի իւր բարերար կրօնաւորին: Այդպէս էր հին ժամանակը, երբ կրօնաւորները պարզմտեան բրիստոնեայ պաշտօնեայ էին և ոչ ձեւական ատաբնանաւորներ:

Հայրիկ նոր էջմիածին Լեամ ժամանակ կոստակոյթիւնները շատ սուբ էին և ամեն մէկը ցնծում էր Հայրիկին մօտ յաղթանակ տանել դրական կամ բացասական միջոցներով: Այսպէս մի Հայրիկ նկատեց, երկու կողմն էլ կուգեն ինձ խաբել, ես էլ կաշխատեմ երկուսէն էլ խոյս տալ:

—Հայրիկ միշտ նեղանում էր և ասում էր. չեմ սիրում Նահապետ եպիսկոպոսի մէջ մի բան, որ նա ծի նամել չդիտէ:

—Մի անգամ Հայրիկ Բենեդից ծիով գնալ էջմիածնին գրնալիս, նահապարհին մի պարսիպան զուրս է գալիս գէմը և հրամիրում իր պարտէզը: Հայրիկն իսկոյն ծին շուռ կրտայ գնալի այն կողմը: Ներթուած կղզուհոյ հետևորդներին և ծառուկ կառք, ես կարծեցի չէր գալ, հիմա լինչ անեմ: Նրանք կանչն, մի չփոթիր, մի քանի րոպէ խոնարհներ կրկնես ուսուցիչ: Հայրիկ ծիից կիջնի, ծալապատիկ կրնստի խոտի վրայ, իրեն ատաջարկած ուսոր խոարէն մի ամբողջ կուտ, և օրհնելով, վեր կենալով՝ ասելիս է պարսիպին մի հիմնադնոց ոսկի և մեկնում է:

—Մի անգամ Հայրիկ Աշտարակ գիւղում էջած ժամանակ մի ծերունի գիւղացի ասում է. Հայրիկ, երբ ես մեռնեմ՝ ևպիսկոպոս պրկէ, որ ինձ թաղէ: Հայրիկը պատասխանում է: Է՛, եպիսկոպոս քանի և հինգ մանէթ կուտէ, կարծդ ես ասէ: Ոչ, կարողանիմ չտնիմ այդքան, ասում է ծերունին: Հայրիկն էլ վրայ է բերում, որ այդպէս է, ծեր գիւղի ատրաէրն էլ քեզ կրթաղէ: Ուէթ օրից Բիւրականից վերադարձին նոյն գիւղում Հայրիկին յայտնում են, որ այն եպիսկոպոսով թաղել փափագող ծերունին վախճանուեց և մեր քահանան նրան թաղեց: Հայրիկը գնում է հանդուցեալի տունը «հոգոց» ասում. տանը լինում են միայն փորրիկ հարսը, որ մի շիշ գինի է գալիս բերում. Հայրիկ մի լիք բաժակ վայելով մեկնում է:

---

6. Հայրիկն ասաց մի արհպոի, տեսնը ես ծաղկոցներ, որ շիներ եմ տանարի երկու կողմ:—Այո՛, Վեհափառ Տէր: Հա՛, մխարաններ կրկարծեն թէ ինձ այնտեղ թաղելու համար է, ո՛չ, իրենց համար է, ես էջմիածին չեմ մեռնելու:

Մի անգամ Հայրիկ իւր մի կապան և վերարկուն կրնելրէ մի տղքատ արհպոի ու երկու ձերքով վերարարկուն բացած բռնում է և ասում, հագիր, հաղիր տեսնեմ լաւ կրդայ վրադ:...

Հայրիկ մի գիւղում թաղնէտաս ուտելիս՝ մի պատուակ կին ասում է, Հայրիկ այսօր ուրբաթ է: Հայրիկ պատասխանում է. Թանը պաս չէ, միան է պաս:

Սիմնիթում մանելով Դասրաքիատ գիւղի հրաշակերտ եկեղեցին՝ Հայրիկ իւր սուր գիտողութեամբ նկատեց, որ եկեղեցում խաչ չկայ, գարձաւ քահանային ասաց. տէր-բարա, քո եկեղեցին խաչ չկայ, ես լինչ համբուրեմ և պատնելով բեմի քարը, գրաւ այնտեղ մի հինգանոց ոսկի:

Գանձասարի անապատների Ծոմում մի հրաշալի տեսարանով լրւրի վրայ գրաւած էր Հայրիկի գրանը, այդտեղ նրան ներկայացաւ գիւղի տասդ ծերունի քահանան: Հայրիկ նրան հարցրաւ քանի՞ տարեկան եա: Իննսուն հինգ, պատասխանեց նա: Հայրիկն ասաց. է՛թէ ես լինեի այստեղ՝ հարիւր քսան տարի կապրէի:

---

8. Մի քանի նոր ձեռնադրուած վարդապետի Հայրիկն ասաց. ես չեմ կարծեր որ վերար և վերարկու հանդնելով կարելի է վարդապետ գառնալ: Դուք մեզ տարիներից չետոյ կարող էք գառնալ և կոչուել վարդապետ, եթէ վարդապետական գործեր կատարած լինիք:

—Սևանայ հին վանահայրը խնդրում է թէ, Հայրիկ, արդեւի, որ հին ժամանակի նման կիներ չդմանեն Սևան: Հայրիկ պատասխանում է, քաշ կացէք, Գրիգոր վարդապետ. ուխտաւոր կիներ ծեր քոյրեր և մայրերն են:

Որովհետև Հայրիկ յաւ ծի նատոյի համբաւ ունի, Շուշի մի չարաբնրնուհիներ անում փորձելու Հայրիկի «հունարը»: Ամարաթի վանքը գնելիս բերում են նրա համար ամբողջ քսաքսում յատնեղ, Ամբրում մեղու ամենի ծին, խոշոր, բարձր, կրակոտ, մի կարգին «բուցեփալ»: Հայրիկ նստում է ծին և հարատար վարում է նրան, ամենքը նկատում են, որ ծին Հայրիկին հետ մրցում է: Յաջող վերադառնալուց, Հայրիկ ծիից իջնելով նկատում է. ես այս ծին նստեցի, բայց ձեր աբաժար մի բան չէր:

Նոր-Բայազիտում Հայրիկ մանելով գահլին և տեսնելով հոխ նաշի սեղանը ասում է. հա, ասել էք՝ մօլլա դեպան, բիր վրօվ նեաք:

Խորէն Սահակեանէն պատմուածս Լեամ ժամանակ մանում է Հայրիկի մօտ և ասում է, Վեհափառ Տէր, այսօր այնպիսի ուռն օր է. որ բազաքակառութիւնը պահանջում է ձեր բոլոր շքանշանները կրկէ: Հայրիկ հեղնելով ասում է. հայդ, գնա, երբ գուռ կամիոպիկս լինիս՝ այդպէս արա:

Ժողովից Ն. Վ. Տ.-Ա.

Ցեղասիրական

Խմբագիր-Հրատարակիչ՝
ՏԻԳՐԱՆ ՆԱՋԱՐԵԱՆ

1907 Թ. ՄԱՐՏ-ԱՊՐԻԼ № 3-4
ԹԻՓԼԻՍ

ՀԱՅՈՑ

ՎԵՀԱՓԱՌ

ՀԱՅՐԻԿԸ

ՕՇԱԿԱՆՈՒՄ

Ծննդեան 1820 Թ. ապրիլի 4-ին 87-րդ տարեդարձը.

ԹԱԳԱՒՈՐԱՑ ԺՈՂՈՎ

ՎՅԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԻԿԻ

անտիպ նոր աշխատութիւնների ալբոմից.

ԷԴՒԱՐԴ VII

Թագաւոր Անգլիայի և կայսր Մեծ-Բրիտանիայի

ՎԻԼՀԵԼՄ Բ.

Կայսր Գերմանիայի

Գերման-Ֆրանս պատերազմին։

Ղպիաեմ ինչպէս պատահուած էր.
Թէ ծայն տուին և հրաւէր,
Մեր աշխարհի թագաւորները
Ժողվան մի օր եկան մի տեղ,
Սկսեցին կարգով խօսել,
Եւ իրարու քէֆ հարցնել.
Արդեօք, ասեն, ամենուս մէջ
Ո՞վ հանդիստ քուն ունի գիշեր։
Այնչափ անհուն հոգ, ըղաղմունք
Մ'բլթէ տան մեզ անխռով քուն։
Ասաց առաջ Բրիտանիոյ
Մեծ սիրապետ Ովկիանոս.
Իմ քունս խաղաղ է և անուշ,
Ունիմ տեղ նաւատորմիղ,
Անպարտելի եմ ի ծովին,
Ովկիանոսն է իմ պարիսպ,
Կղզիս փակեր է շրջապատ,
Իմ բազուկներս պարզեր եմ ես
Մինչ հնդիկս և ճենաստան։
Թէ հպատժեն դիս ցամաքէն,
Ես ի ծովուն լոզալ դիտեմ,
Զերթ Լևիաթան ջուր փչելով,
Ողողեմ ես աշխարհ բոլոր։
Մեծ Նապոլէօն, այն դուռ վիշապ
Ֆշաց մրցեց ընդ Լևիաթան,
Որ իւր գօրեղ պոչով ոլորեց
Տարաւ փակեց Հեղինէ կղզին։
Թո՛ղ այս բնական իմ գօրութիւն.
Ես հարուստ եմ անչափ անհուն,
ուխտ դնեմ ոսկի բարձին
Հանդիստ քնեմ ես ապահով։
Կարգն էր ասպա Գերմանիոյ
Խրոխտ ինքնապանծ Կայսերին.
Ասաց՝ չունիմ ես ոսկեբարձ,
Ունիմ կրթեալ զինուորութիւն,
Անպարտելի ահեղ բանակ.
Ես ցոյց տուի իմ գօրութիւն

Գերման-Ֆրանս պատերազմին։
Սոսկ ռազմական չէ գօրութիւնս,
Գերմանիոյ թագին պարծանք
Իւր դիտութիւնն է հռչակաւոր։
Ես քուն չունիմ, շարժուն եմ միշտ,
Իմ քնարն ինչ է գիտէք,—
Կրնալի ահեղ թնդանօթ։

ՖՐԱՆՑ ՅՈՎ

Կայսր Աւստրիայի

Գլուխս դնեմ վերէն քնեմ,
Վատահ լինիմ գիշերն ի բուն։
Մի ուխտ ունիմ և ցանկութիւն,
Կամիմ յայտնել ի ժողովիս.
Ուր է Ջնացել Աբդէլեան
Հարցն ի վաղուց ժամանակի։
Վեհաժողովն Բերլինի
Խնդիր լուծէց թէ կախ թողեց,
Վաթսուն և մի երրորդ յօդուած
Հայոց ազգին յոյսն ու հաւատս,
Կատարեցաւ բանն ի ներհակ.
Հարիւր հազար հայք ղոհուեցան։

ԱՐՄԱՆԴ ՖԱԼԻԷՐ

Ֆրանս. հանրապետ. նախագահ

Ոմանք ասեն թէ Թիւրքիան
Հիւանդ է յոյժ առ ի վախճան,
Ես բժիշկ եմ, թողէք զուք ինձ
Դարման տանեմ խելօք հիւանդին,
Եւ ես կարեմ զայն բժշկել,
Աշխարհ տեսնայ և զարմանայ։
Բժշկութիւն իմ փորձն այս է,

ԱԲԴՈՒԼ ՀԱՄԻԴ

Սուլթան Տաճկաստանի

Փոքր-Ասիոյ երկրաթուղին
Տանեմ մինչև ի Բաբելոն,
Իմ շահ փոքր է որոշ չափով,
Իսկ Թիւրքիոյ մեծ է, քան պիմ,
Երկիրն իւր հարստանալ,
Եւ ժողովուրդ բարգաւաճի,
Գուցէ ալապէս տահաւ, տահաւ
Արևելեան հարցն լուծուի։
Լսեցին այս վեհապետը,
Խոժոռեցան ասի անպի։
Բանին կարգն էր Գաղղիոյ
Նախագահի հանրապետին.
Ասաց՝ ես չեմ մեծ թագակիր,
Այլ պարզ մի մարդ առանց փօռմի,
Թագ Նապօլէօն տարաւ իւր հետ.
Երթայ բարով, չդառնայ էլ։
Զուտիմ մեծ հոգ ինչպէս գուք,
Իմ պաշտօն կարճ է, համառօտ։
Բայց նզովեալ արքայասպանք
Զդիտեն երբէք չարն ու բարին,
Թէ թագաւոր, թէ հանրապետ
Գլուխ է, ասեն, պէտք է կտրել.
Թագաքակիրքի եղան սղդեր,
Էլ չեն ս.իտոյ գլուխ և թագեր։
Ես չունիմ քուն, փախեր է քունս,
Երբ յիշում եմ բարի Կարնօն։
Մի բան էլ կայ, ո՛չ միայն ես,
Այլ և բոլոր սղդ Գաղիոյ
Անքուն առնէ, տանջէհոգին,
Աւաղ չկարեմ արտասանել...
Սլդաս-Լօրէնն է այդ բան։
Օ՜, խոժոռեցաւ Գերման կայսր։
Խօսք առեց հին պետութեան
Սէսարիոյ Յովսէփ Կայսր.
Ես էլ ունիմ շատ պատճառներ,
Որ չտան ինձ քուն ու հանգիստ,
Միտաւիկ օրպիս մեռայ,
Զհղև թագին, ահ, նա ժառանգ։
Թագուհիս իմ անմնան
Սպանեցին վատ դաւճանք,
Թողում այս յաւ բնտանեկան,
Որ հատանէ քուն իմ աչացս։
Երկիր ունիմ ես բարեշէն,
Որ չէ կաղմեալ մի սղդ մի ցեղ,
Այլ մի խառնուրդ այլազեղս.
Միշտ հակառակ կան իրարու,
Թագաքակիրքի, բայց Բաբելոն։
Քանի ժանր է և դժուարին
Ղեկավարել հակառ սղդեր,
Միայն Աստուծոյ ձեռն է կարող,
Որ հակառակ տարերք վարէ։
Դուք դիտէք և վկայէք,
Իշխանութիւնս է հայրական.
Ես չմամիմ բնաւ երբէք
Որ բռնութիւն դնեմ ի գործ.
Ծերացոյն եմ և փորձառու,
Գիտեմ ես քաջ թէ բռնութիւն
Ծնանի զայլ իմն ըզբռնութիւն։
Հաւատացէք, ով թագաւորք,
Ես պատմութիւն բերեմ վկայ։
Հիւսիսային մեծ պետութեան
Գահակալին էր բանին կարգ.
Ասաց՝ ունիմ լայնաժառալ
Աշխարհ անեզր և անսահման.
Ուր ես կամիմ, զբնեմ զյուխս
Եւ քուն լինեմ իրրև Առիւծ.
Որ կայ իքուն և արթուն է։
Եւ ո՞ւր կարէ վրդովել քունս,

Ն Ի Կ Օ Լ Ա Յ Բ.
Թագաւոր Կայսր Ռուսիոյ

Բիւրաւոր քաջ կազակներ
Ինձ պահապան կան առ պրունս։
Մեծ Նապօլէօն մտաբերեց,
Մինչ Մոսկուա արշաւել,
Վտանգեցաւ, սարկացաւ։
Միջակոտոր զարծաւ յեաս։
Էնվալիդի դերեզմանէն
Եթէ լսէ, թէ Գաղիայ
Դաշնակից է Ռուսիոյ,
Հին ոսխին և թշնամոյն,
Խռովեն անշուշտ ոսկերոտիք,
Բողոք բառնան առ հայրենիք։
Է՜ ժամանակ, ժամանակ,
Որ փոփոխէ զամենայն ինչ։
Ոսխն առնէ դաշնակից։
Բայց խօսեմ ձեզ, ով թագակալք,
Արևմուտքէն, Եւրոպայէն
Զունիմ բնաւ երկիւղ կասկած,
Այլ իմ վախն է Արևելք,
Ձենաստան է, Ձենաստան,
Որ հատանէ քուն յաչացս։
Ի՛վ դիտէ դայ ժամանակ,
Որ զօրանայ սղդ Ձենաց,
Գաղաքակիրքի լինի մեղ պէս,
Վարժեալ ի զէն և պատերազմ,
Կաղմէ տեղ զօրաբանակ
Եւ չրհեղեղ լինի, չորդէ
Արևելքէն մինչ Արևմուտք,
Համայն աշխարհն իմ ոդողէ
Մանչուրայէն մինչ Նեպա դեռ
Մոլրաքաղաքն իմ Պետերսբուրգ,
Եւ ով կարէ թուամբ քաշել դէմ,
Մանչուրան է իւր ճանապարհ։
Զթողնէ՛ւ սրպէսք, որ ես դրաւեմ
Մի տեղ թուամբ քաշել իւր դէմ։
Ախտագին այս մեծ վտանգ
Մտաբերեմ, սոսկամ այժմէն,
Հոգածութիւն դիս խռովէ,
Քուն և հանգիստ բառնայ չինէն,
Զէք հաւատար դուք այս բանին,
Փոքրիկ ձաբռնն է ապացոյց։
Սուլթան Խալիֆ Թուրքիոյ Թագ
Ասաց՝ ով դուք աշխարհակալք,
Ինձ կարգ տուէք ես էլ խօսեմ,
Մի թէ դուք դիս փոքր համարէք,
Զաւակ եմ ես Իսմաէլի,
Աբրահամու ճիշտ սերունդէն,

Ո՞ւմ իսոտացար. Տէր Աստուած մեր
Զաւակներուն տալ բաժին,
Պատգամ առաւ հրեշտակին,
Հրեշտակ խօսեց խեղճ Հագարին,
Թէ Իսմայէլ մեծ ազգ լինի,
Տիրէ աղգաց և աշխարհի,
«Զեռք նորա յամէնեսին,
Ամէնեցուն ձեռքն ի նա»։
Ի՛վ թագապանծ իշխանք երկրի
Գիտէք արդեօք պատգամէն միաք.
Զեռք ձեր քարշեն դիս չորս կողմէն,
Իմ ձեռք բռներ ձեր օձիքէն,
Քարշեցէք որչափ կամիք,
Եւ ես անշարժ ինամ ի կեդրոն
Զնաշխարհիկ Բիւզանդիոն,
Վա՜յ աւուրն, որ միանաք
Զիս մի կողմէն քարշէք ի բաց,
Այդ յաւիտեան դուք չէք տեսնար.
Իմ այս բաժին Աստուածէ տուեր,
Ընդէ՞ր հապա դուք նախանձիք,
Միթէ կարէք չնչել պատգամ։
Ուննք և դուք մեծ-մեծ բաժին,
Գիտեմ ես քաջ ի՛նչ է ձեր միաք,
Գուցէ կարծէք Թուրքիոյ կեանք
Ծերացեր է, մօտ ի մահ,
Միթէ տպատեք դուք այն աւուր,
Դրախտի նման հարուստ երկիրս
Բաժին-բաժին անել ձեր մէջ։
Քանի՞ պժուար է, դուք դիտէք
Երբ խնդիր դայ բաժին վերչէն,
Որ առիւծն է և գօրաւոր,
Բաժին խնդրէ մեծ-մեծ կտոր։
Աստ է յանձամ կոխ, պայքար,
Արևնահեղ դուռ պատերազմ,
Եւ ի՞նչ լինի վախճան կռուոյն,
Այս է միայն-ուրիշ ոչինչ.
Արարիոյ մեծ խալիֆան
Թողուլ իւր գահ Բիւզանդիոն,
Խալդուքիւն լինի աշխարհ։
Հարցէք դուք այժմ, հանգիստ է
իմ քուն։
Օրհնեալ Աստուած, խոր է իմ քուն,
Ես հաւատամ նախատգրին.
Ինչպէս Աստուած կամի յերկինս,
Այնպէս լինի երկրիս վերչէն
Բանին սկիզբն և իւր վախճան։
Բայց դուք ընդէր վրդովէք քունս
Արևելեան հարց հանելով,
Ես ուրախ եմ և բաղդաւոր,
Անդաւ լինէն դժգոհեն հարց,
Գնաց մնաւ ի Ձենաստան,
Ո՞ տայր, որ անդ կէսաթ ծնայր,
Կրկին ի յետ չդառնար։
Բայց թէ դառնայ էլ, չէ ինձ փոյթ.
Փորձուելով, փորձուելով
Ես լաւ ուսայ զիոլիթիկ.
Գիտեմ ինչպէս պէտք է վարուիլ։
Իմ դանձարանս թափուր է միշտ,
Զունեմ դլխոյս ոսկէ բարձիկ,
Կամ թենեանօթ այն Կրուպի։
Բայց ես ունիմ պատրաստ բարձեր,
Ժամանակին հեռևելով
Ընարեմ յաւէտ յարմարագոյն։

ԼԷՕՊՕԼԴ
Թագաւոր Բելգիայի

Բարձեր աւն վարձ ահագին է
Ժամանակին բանապատճառ.
Զոր չկամիմ, ահ, զայն առնեմ,
Այս է միայն իմ փոլիթիկ
Ժամանակին հետեւելով։

Զարմացան ողջ Թագակիրք
Կեցցէ, ասեն, Սուլթան խալիֆ
Քաղաքագէտ է քան զնեզ։

Վերջնական կարգն էր Պելճիոյ
Փոքրիկ երկրին, փոքրիկ Թագին,
Այլ նա մեծ էր և խմաստուն,
Սոլոմոնի պէս էր խօսում։
Լուսարուք ինձ, Թագաւորք.
Ո՞վ եա ձեզ այլ իշխանութիւն.
Եթէ ասէք՝ յերկնուստ է ինձ.
Եւ հապաղաք՝ թէ կայ մի աէր,
Նա Աստուած է ամենիշխան,
Եւ Թագաւիր է ձեր պիտոյն,
Զեզ յանձներ է այս միճ աշխարհ
Վարել, դասել արդարութեամբ,
Եւ դուք ունիք համար տալու
Դատաստանի օր սպասելոյ։
Ինչ էապն որ մեծասքանէք.
Մ'ինն պարծի ոսկի բարձով,
Մ'լան Կրուպի Թնպահօմով,
Այլ ումն աշխարհ իւր ընդարձակ
Համարի իւր ապաւէն,
Զոսկը ոչինչ թէ Աստուծով
Թագաւորէք երկրիս վրայ։
Գանգատ բառնաք՝ թէ քուն չունիք,
Հէր ապա գուք անքուն առնէք
Եւ չարչարէք խեղճ ժողովուրդ։
Աստուէք ինձ, ով վեհապետք,
Թէ ո՞ւմ վրայ է հաստատուն
Ձեր գանձ, աթոռ և սերութիւն,
Դուք կարծում էք թէ գանձ աթոռ
Կարէ ինքնին կալ հաստատուն.
Թէ չունիցի նա պատուանդան
Հաւատարիմ իւր ժողովուրդ,
Որ անծնուէր է Թագաւորին.
Եթէ շարժի և կամ խախտի
Ձեր աթոռի ամուր խարիսխ,
Ո՜հ, կործանի գահն ու աթոռ
Եւ Թագաւորն Թագն ի գլուխ։
Աչխատեցէք, ով վեհապետք,
Ձեր պատուանդան հաստատ պահել
Հաւատարիմ ժողովրդով։
Քանի որ կայ մեր այս աշխարհ,
Պիտոյ է միշտ աշխարհավար,
Թագաւոր ժողովուրդին
Եւ ժողովուրդ Թագաւորին,
Երկու գասն ի միասին
Պատմեն մի կեանք համերաշխ,
Աստուածապիր է այս կարգ,
Մարդ չկարէ փոփոխել զայն։
Նէրոյութիւն, ով մեծ իշխանք,
Դուք խօսեցիք իւրաքանչիւր
Թէ ինչ բարձեր են ձեր պլխոյն,
Որով հանգիստ լինիք ի քուն։
Արդ ես ասեմ, ինչ է իմ բարձ,
Գուցէ խնդաք և պարմանաք,
Պելճիոյ հեղ Թագաւորին
Ժողովուրդի սիրան է իւր բարձ,
Ուր ես պլսիկս դնեմ խաղաղ,
Թագ հրեշտակին տամ տո ի պահ,
Եւ ես հնչեմ հանգիստ անվախ,
Ժառանգութեան իմ այս երկիր
Ես հեզութեամբ ժառանգած եմ,
Կարծեմ արդար է իմ այս բան,
Քան Քրիստոսի երանութեան։
Մի բան ունեմ, վերջին է բանս,
Զայն չիարեմ ես մոռանալ,
Բանս արդար է և ճշմարիտ
Եւ Թագերուդ է մեծ պարտքի։
Թէ առնիցէք, երջանիկ էք
Դուք և ձեր ողջ հպատակներ։
Ցանկալի է, յոյժ ցանկալի,
Խաղաղութիւն մ'ը աշխարհին,
Խաղաղութիւն Թագաւորաց,
Խաղաղութիւն ժողովրդին.
Խաղաղութիւն հրեշտակ երկնուց
Խաղաղութիւն բերաւ աշխարհ,
Խաղաղութիւն Թողուց աւանդ,
Ո՜հ, կորուսաք խաղաղութիւն.
Ւ՞ր, մի՞թէ մենք ամբարիշտեմք։
Հերիք այսչափ մեծութեան աեղ,
Բաւ և շատ է, սահման դրէք,
Հերիք անթիւ զէնք ու բանակ,
Ջինւորական տուրք անքանակ
Ժողովուրդի բառնալ քամակ,
Բարձելով բեռըն ծանրագոյն
Անտանելի և դժնդակ։
Ապրեր ողջոյն հեծեն ոգորմ,
Բոլորում են մինչև յերկինս։
Մի՞թէ կարծէք արդարացաւաժ
Անտես առնէ իւր դատաստան։
Բաւ է, դրէք սուրն ի պատեան,
Ողջունեցէք խաղաղութիւն։
Յաւին կացեալ աշխարհապետք,
Կեցցէ, ասին Պելճիոյ Թագ,
Նա բանիաօսեց հշմարտութեամբ,
Աւետարան էր իւր բերան։
Բայց մեք պատնամք ի մեր բան..

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԻԿ

դրեց այս բան։

ի Ս. Էջմիածին։

Ս. ԷՋՄԻԱԾՆԱՅ ԹԱՆԳԱՐԱՆ. ԺԳ ՇԱՐԱԿԱՆ

ԹԻՖԼԻՍ. ԲՅՈՒՆԵԿԱՆ ԱՑԳՈՒ ՇՈՒՐՋԸ
Մարտի 18-ին՝ կայծակը խարաւուածց սրա ատորոտում, փորելով գետինը 3 սաժէն լայնութեամբ և պատնէշի մի մասը փուլ տուաւ։

ՎԵՀԱՓԱՌ

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՄՏՔԵՐԻՑ

Աշխատութիւն մարդոյն կեանք արդիւնաւորող Աստուծոյ օրհնած սերմն է, եթէ յուսով ցանես զայն՝ շահարերութեամբ կը հնձես։

—

Աշխարհը փորձաքար մըն է, որին պէտք է զարնին մարդիկ, որպէսզի ճանչցուին։

—

Ամուսնական սէրն անդին է, անդիւտ է և քան զմահ զօրաւոր է։

—

Հզօրագոյն է սէր երկու ամուսնաւոր սիրելեաց մէջ, երկու ընչով կընչէ, երկու սըրտով կմիանայ, երկու լեզուով կխօսի, երկու ոտով կապրի, երկու կեանքով կգօրանայ։

—

Անիրաւ է մարդ, եթէ ուրիշի քրտանց ու ծառաց հացի սպասէ։

ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ՃԸՌ-ՏՕՆԸ

Այս 1907 թուին մեր ս. Գրիգոր Լուսաւորչի Խոր-վիրապ ձգելու տօնը կատարուեց ոչ թէ սովորականի պէս մեծ պասի հինգերորդ շաբաթ, այլ երրորդ շաբաթ օրը։

Տարօրինակ բան։ Ամեն տեղից զարմանք են յայտնում այս վոփոխութեան վրայ, բովհետև հայ ազգը սովոր է այդ տօնը միշտ հինգերորդ շաբաթ կատարել։

Բայց պատճառը մի շատ հասարակ բան է։ Հայոց եկեղեցին ունի մի քանի տէրունական տօներ, որ անշարժ են, այսինքն միշտ գալիս են միևնոյն տեղ նոյն թուին անփոփոխ, և կանոն է սահմանել, որ տէրունական տօնին ոչ մի սուրբի տօն չըտօնուի։

Դրանցից մէկն է Աւետման տօնը, որ միշտ կատարւում է ապրիլի 7-ին։ Այս տարի Աւետումը գալիս է մեծ պասի հինգերորդ շաբաթ օրը, երբ պիտի լինէր Լուսաւորչի տօնը։ Վերը յիշած պատճառով Աւետումը կատարւում է ապրիլի 7-ին Լուսաւորչի տօնի տեղ, իսկ վերջինս տեղի տալով տեղափոխւեց երրորդ շաբաթ օրը։

Այսպէս պատահում է 532 տարին միայն մի քանի անգամ։



ՎԱՆ. ՎԱՐԱԳԱՅ Ս. ՎԱՆՔԸ
ՀԱՅՈՑ ՀԱՅՐԻԿԻ
(ԱՐԾԻ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ)
ԲՈՒՆԸ

ԽՈՐ ՎԻՐԱՊ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԲԱՆՏԸ

ԱՐՈՋԱ

Fantasie *իրականութիւնից*

Հինգ արարւածով և 7 պատկերով

ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐՈՒԱԾ

շարունակութիւնը

(Սկիզբը № 2 Գեղափնջիկ)

Մալագ. (*Մտնում է Սալոմէ Ստեփանովնայի և Ընդրէյ Ստեփանովիչի հետ, վերջնիս կռնատակին Ծղծաղան*) *Համեցէք. խակոյն։*

Սալոմէ. *Չէ, չէ, մինք կու սպասինք, իժում. վուն-չինչ չասիս։* (*Մալագը դուրս է գնում*)։

—

Անդր. Ս. *Մտիկ արա, Սալոմէ. էնէնց անխիս, որ բանը յիդ չընդգնի, հէնց էս երկու օրը քութան անինք, թէ չէ՝ ամենքն էլ վուր իմանան, էլ ով ասիս դրան չուղի։ Հանաք բան է օխտանասունուհինգ հազար մանէթը։*

Սալոմէ. *Բաս ինքը Օզէն վուչինչ։*

Անդր. Ս. *Ո՞վ է ասում. շատ սիրուն, շատ արմատան ախչիկ է, մէր քախկումը նմանը չունէ, ամա դէ ինչվէլի էսօր բիսկ էր ուղիլը։*

—

Մալագ. (*Մտնում է դաշնամուրի վրայից բակր վերցնելով*) *Այս րոպէիս գալիս է Օզալիա Սերգէևնան, մօտը հիւր ունի։*

Սալոմէ. *Ո՞վ է։*

Մալագ. *Դարարադից։*

Անդր. Ս. *Սալոմէ, ՚իր կէհամ, դու բանը քութա արա. մէ անաթեմէն գոնքամ։*

—

Վարդուհի. (*Մտնում է, շատ սիրալիր բարևելով*) *Բարև, ներկայէք, ձեզ ապատցնել տէի։*

Անդր. Ս. *Դուք մեզ ներկայէք, անժամանակ կանք։ Բայց ես գործով և շնորհաւորութիւնով, ահա ինչու աճապարեցի։*

Վարդուհի. *Խնդրեմ, համեցէք։* (*Նստում է ինքը և նրանք*)։

Սալոմէ. *Օզալիա Սերգէևնա, դիպիք ձեզ համա Անդրիշան ինչ հրեշտի խաբար է բերի։*

Անդր. Ս. (*Ընդհատելով*) *Ոչ թէ խաբար, այլ փաստ. շնորհաւորում եմ, Օզալիա Սերգէևնա, արդէն հօթանասունհինգ հազարը գրպաններումս կարող ենք հաշուել։* (*Հանում է գրպանից հեռագիրը տալիս Վարդուհուն, որը մտքում կարդում է վայրկենաբար*)։

Վարդուհի. *Վերջապէս...* (*կանչում է*) *Մամա, մամա, Հայկանուշ, նիկէք այստեղ։*

Սալոմէ. *Օհօ, Այկանուշա Պաւլովնան էստի է։*

—

(*Մտնում են Հայկանուշը և մի քիչ յետոյ Մարիամ-բաջին. Սալոմէն և Անդր. Ստեփ. մօտենում են և բարևում եկողներին. Սալոմէն ներկայացնում է եղբօրը Հայկանուշին*)։

Սալոմէ. (*ծանօթացնելով*) *Այկանուշա Պաւլովնա, էս ախպէրս է։*

Վարդուհի. *Կուզինաս։*

Անդր. Ս. *Թէև առաջին անգամն եմ պատիւ ունենում սեղմել ձեր ձեռը, Այկանուշա Պաւլովնա, բայց ձեր մասին շատ եմ լսել։*

Սալոմէ. *Դէ հերիք է, էլի, վուր Օզալիա Սերգէևնայի կուզինան է...*

Հայկանուշ. *Ո՜հ, եթէ Օզին ճանաչելով էք ինձ էլ ճանաչում, ասել է, երբէք ինձ չը պիտի ճանաչէք։*

Մարիամ-բաջի. *Քրոջս աղջիկը շատ ուրախ խառնիճաթ ունի, երանի չէր մի քիչ էլ վարդուհիս նման լինէր Հայկանուշին։*

Անդր. Ս. *Մայրիկ, չը պիտեմ ինչ բնաւորութիւն ունի Այկանուշա Պաւլովնան, բայց Օզալիա Սերգէևնայի անգնահատելի բարեմասնութիւնները ամբողջ քաղաքին յայտնի է։*

Հայկանուշ. *Ըսածիս մի բան որ անգնահատելի է, նա արժէք էլ չունի։ Ինձ ձեր քաղաքում ուրեմն ոչ մի գին չեն տայ։*

Անդր. Ս. *Ճշմարիտ ասած մայրիկը, որ դուք զարթի ընտանութեան տէր էք։* (*Նայելով ժամացոյցին*)։ *Ո՜, ես ուշանում եմ, Օզալիա Սերգէևնա. մի րոպէով մտի ձեզ մօտ աւետելու, այժմ պիտի աճապարեմ դատարան վաւերացրած հեռագրով դրամը փոխադրել այստեղ։* (*Ոտի կանգնելով*) *Հանաք բան է հօթանասուն հինգ հազար րուբլին թողնել առանց տակոսի օրերով։*

Հայկանուշ. *Ի հարկէ, անշարժը մեռածի հաւասար է։*

Վարդուհի. *Ես ձեզ մի մեծ խնդիր ունիմ Անդրէյ Ստեփանիչ։*

Անդր. Ս. *Խնդրեմ, ինձ հաճոյք է ձեզ ծառայելը։*

Մարիամ-բաջի. (*դուրս գալով*) *Տեսնեմ Մարդուսիօրը տեղաւորեցին։*

—

Հայկանուշ. *Սալոմէ Ստեփանովնա, մէթէ դուք Բաղու չէք եղել մինչև հիմայ։* (*Խօսում են մի կողմ անցնելով*)։

Վարդուհի. *Այդ դրամները կարելի է մի տասն օրից էլ ստանալ, վռազ չի։*

Անդր. Ս. (*Ինքն իրան կորցնելով և կարծես դատարանում փաստաբանելիս*) *Ալէքսանդր երկրորդի օրէնքների սրբութիւնը հէնց նրանումն է, որ գործը քննւում է արագ և ճշմարտութեամբ։ Արագ... Գիտէք քաղաքակրթութիւնը, առաջադիմութիւնը որքան, որքան կախուած ունին այդ արագութիւնից։ Երևակայեցէք ձեզ նախորդ դարը, այդ դանդաղ, կրիայի քայլերով առաջադիմող դարը, ուղտերի, եզների, էշերի բեռներով քարավանները։ Իսկ այժմ, այո, տիկիններս, այժմ ամեն ինչ կատարւում է մի ակնթարթում։ Եւ եթէ կատարողը շնորհք, ընդունակութիւն ունի, իր գործին հմուտ է, նա իր անելիքը կըկատարի անյապաղ։*

Հայկանուշ. (*անկիւնից*) *Ինչպէս մեզանում ասում են, յիշում ես, Վարդուհի, էն բէզաոլի խօսքը.—«որսը բարըմը կը բռնենս»։*

Սալոմէ. *Էդ ինչ է ասում։*

Հայկանուշ. (Ընդհատելով) *Ինչ ձեր փաստաբան եղբայրը ամբողջ ժամ ճառախօսում է Նիւրնդ դատաւորի առաջ։ (Մատով ցոյց տալով Վարդուհուն)։*

Վարդուհի. *Իմ մի ընկերուհուն Շուշում կալանաւորել են և բերել այստեղ Մեհեխում բանտարկելու։ Խնդրում եմ օգնէք ինձ. իմ կամ մէկի երաշխաւորութեամբ պէտք է ազատել նրան բանտից մինչև գործի վերջանալը։*

Անդր. Ստ. *Ի՞նչ յանցանքի համար են կալանաւորել։*

Հայկանուշ. *Մեր օբերում ինչի համար են մարդուս հոգին հանում. կամ Պրօշակ կը լինեն ձեռին տեսած կամ Հնչակ։*

Անդր. Ստ. *Շատ լաւ, ես իսկոյն կը գնամ ժանդարմսկի ուպրաւլենիէն և կը տեղեկանամ գործի էութեանը։ (Կամենում է դուրս գնալ) Առայժմ պտեսուքիւն, մի ժամից կը գամ. Սալօմէ, մուլտի տու ինձ։ (Դուրս է գնում և դրան շէմքից նորից ետ դալիս) Սակայն, Բօզալիա Սերգէևնա, եթէ ինձ այնտեղ հարցնեն, թէ ես ձեզ եմ և ինչ հիման վրայ եմ տեղեկութիւններ հաւաքում։*

Հայկանուշ. (Ընդհատելով) *Ասացէք, որ փաստաբան էք և հանաբար ստանալու համար էք հարցնում։*

Անդր. Ստ. (*Մի փոքր իրան վատ զգալով*) *Ինձ չը հասկացաք...*

Վարդուհի. *Ներեցէք, Անդրէյ Ստեփանիչ, քոյրս միշտ կատակներ է սիրում։ Ես կը գամ ձեզ հետ միասին կը տեղեկանանք։*

Անդր. Ստ. *Ոչ, ոչ, ես իսկոյն կը վերադառնամ։*

Հայկանուշ. (Ընդհատելով) *Անդրէյ Ստեփանիչ, խընդրեմ այդ յանձնարարութիւնը իմ կողմից ընդունէք (նստում է գրասեղանի առկ և գրում)։*

Վարդուհի. *Խնդրեմ մի րոպէ սպասեցէք, միասին գնանք (դուրս է գնում դէպի իր սենեակը)*

—

Անդր. Ստ. *Ոչ, ոչ, դուք մի եկէք, ես կը գնամ և իսկոյն կը վերադառնամ (Սալօմէին մի կողմ քաշելով) Բուքթա ուրն, պրծի, չուշացնիս. (բարձր) Այկանուշա Պաւլովնա, յտեսուքիւն, իսկոյն կը վերադառնամ։ (Կամենում է դուրս գնալ)։*

Հայկանուշ. *Սպասեցէք, սպասեցէք, (ամոռից բարձրանում է, գրածը պրեսի տակ սխմելով) ահա ձեզ գաւրիտնօստ։ (Կարդում է)։*

Յարգելի

պարոն Անդրէյ Ստեփանովիչ,

Տասն օր սրանից առաջ Շուշում կալանաւորել են իմ ընկերուհուն՝ օրիորդ Սաթինիկ Տէր-Ոհանջանեանին և բերել Մեհեխ։ Այսու յանձնարարում եմ ձեզ (մտնում է Վարդուհին գլխարկը ծածկած, պալտօն հագած, ձեռնոցները հագնելիս)։

—

Վարդուհի. *Գնանք (դառնալով Անդր. Ստեփանիչին).*

Հայկանուշ. *Համբերիր. խնդրեմ թողէք իմ փաստաբանին յանձնել իսկական հաւատարմաթուղթ-պայմանագիրը։*

Վարդուհի. *Ա՛խ, Հայկանուշ, մարդու սրտի հետ գնա։*

Հայկանուշ. (*Ուշադրութիւն չը դարձնելով շարունակում է կարդալ*)

Հոգ տանել և ինչ երաշխաւորութիւն էլ պահանջելու լինեն, ընդունէք, միայն թէ այդ անմեղ աղջիկը բանտից արձակեն իսկոյն։

Գրաւական կը ներկայացնեմ, որքան պահանջէք և ձեր հանաբարը որքան կը հրամայէք։

Յարգանօք

Հայկանուշ Պողոսեան Մարզպետանց։

Թիֆլիս 189 թ. .. փետր.*

Վարդուհի. *Վէրջացրիր, դէ գնանք։*

Սալոմէ. *Բօզալիա Սերգէևնա, դուք միք գնա. տխրելիս էս նահաթին դուքայ. 'իս էլ իմ ճնում ձիզ մօտ։ (Անդր. Ստեփ. Մուղթ առնելով, ինքնագոհ դուրս է գալիս Վարդուհին ետևից կամենում է գնալ, Սալօմէն ծեռից բռնում է, քաշում)։*

—

Հայկանուշ. *Դէ էլ ձուր ես գնում, ահա մեր փաստաբանը կը բերէ Սաթինիկին։*

Սալոմէ. *Անպատճառ, անպատճառ, դուք ճնացէք Բօզալիա Սերգէևնա, 'իս էլ իմ ճնում։ (Կամենում է Վարդուհու պալտօի կոճակները ետ անել)։*

Վարդուհի. *Շատ լաւ, ես չեմ գնալ Անդրէյ Ստեփանիչի հետ, բայց դուք Հայկանուշի մօտ ճնացէք, ես գնամ եկեղեցի, շուտով կը վերադառնամ։*

Հայկանուշ. *Գնա, գնա. քեզ հազար Քոկով կապելն չեմ ճնալու, հոգեհանգիստը տարան, շուտ արա։*

Սալոմէ. *Բօզալիա Սերգէևնա, բեզամաղ խօ չէք, վուր 'իս էտի իմ. ինչ վուխտի հոգեհանգիստ է. ուփրօ լաւ չէ՞, վուր հարսնիքներու մասին մտածինք. էս շափաթ էլ փսակ կուլի ու էլ չէ։*

Վարդուհի. *Հարսանիքների, խնճոյքների սիրահարը Հայկանուշն է, խօսեցէք նրա հետ, մինչև կը վերադառնամ։ (Վարդուհին դուրս է գնում)։*

—

Հայկանուշ. *Ի՞նչ է, Սալօմէ Ստեփանովնա, կամենում էք ամուսնանալ, կո՞ւզէք ձեզ համար մի լաւ փեսայ ճարեմ. Բագումում դիւժինների ունեմ նրանցից։*

Սալոմէ. *Ջէ, առաջ ախպօրս պիտիմ փսակէն, վուր մէրս մենակ չըմնայ, իժում 'իս։*

Հայկանուշ. (*Կոմիկաբար*) *Ի՞նչ կը տաք ինձ, եթէ ձեզ նշանեմ։ Ինչ տեսակ ամուսին էք ուզում. ջահիլ, կրթւած, ազքատ, թէ հարուստ, միլիոնների տէր։*

Սալոմէ. *Հալբաթ, հարուստ, չէհել։*

Հայկանուշ. *Շատ հարուստը ջահել չի լինիլ, և եղածն էլ բանի պէտք։ Ընտրեցէք կամ ոռճկով ապրող ջահիլ մի ինժինէր, ապագայում դուցէ և միլիոն ունեցող, կամ թէ ինժիներների ապա միլիոնատէր... շատ էլ ոչ ջահիլ։ (Գնում է նստում դաշնակի տակ և արևել. ղանակներ կտոր-կտոր ղէսից-ղէսից ածում ու սկսում դըլխովը պարել)։*

Սալոմէ. (*մտածելով*) *Վուբ շատ չէհել չըլի, քիչի միլիօն կունենայ։*

Հայկանուշ. *Այնքան, որ թէկուզ ամին օր հազար մանէթ կրակը դցէք, ուշ չանէք։ (Շարունակում է նուագել Գէյշից)։*

Սալոմէ. *Մաշ ձիր մարդը ինչի՞ համ չէհել է, համ էլ էնքան հարուստ։*

Հայկանուշ. *Իմ ամուսինն էլ վաղուց ազքատ կը լինէր և անժամանակ ծերացած, եթէ ես չը լինէի նրա կինը։ Մենք էլ չենք սկի շատ հարուստ։*

—

Մալագ. (*Մտնում է մատուցարանում սուրճ, գաւմա բերում և սեղանի վրայ դնում*) *Համեցէք, Սալօմէ Անդրէևնա։*

Սալոմէ. *Ի՞նչ լաք նեղութիւն քաշում։*

Հայկանուշ. *Սարսափելի մեծ նեղութիւն։ Մալագ, Թիֆլիսի օրիորդները շոկոլադ են սիրում և հարուստ փեսացուներ. վնաս չունի, եթէ շատ էլ թարմ չը լինեն։ Ջի՞ս կարող բերել։*

Մալագ. *Այս րոպէիս կը պատրաստեմ։*

Հայկանուշ. *Ա՛խ խնթի, ինչ կը պատրաստես։ (Սալօմէն նստում 'է դաշնակի տակ և անծաշակ ձևով ռասկան, ցիգանային մի ռօմանս է նուագում)։*

Մալագ. *Շոկոլադ չէք ուզում, խնդրեմ պատրաստեմ։*

Հայկանուշ. *Փեսացու էլ Սալօմէ Անդրէևնի համար, միայն շատ հարուստ։ Դու զրաղեցրու հարսնացուին, ես գնամ փեսացուն բերեմ, յետոյ դու կը գնաս շոկոլադը կը պատրաստես։ Սալօմէ Անդրէևնա, ես 'իսկոյն կը գամ։ (Դուրս է գնում սեւանատան դռնով)։*

Մալագ Համեցէք սուրճ խմեցէք,տեսէք ինչ լաւն է։ Ղարաբաղի գաթան է համեղ, մէ ձեր Թիֆլիսի բիշին, համեցէք։

Սալոմէ. (Ընդհատելով նազելը և խորհրդաւոր, իրրև գաղտնիք հարցնում է) Մալագ, Այկանուշա Պաւլովնան շատ է հարուստ։

Մալագ Կատարեալ վեհանք է, ինչ լսան է հարստութիւնը։

Սալոմէ. (Գաձան մեծ-մեծ կտորներով ուտելով) Բանի միլիօն կունենայ։

Մալագ Էզպէս լսանելն ձվ է նրանից հարցնողը։ Էնքան ունի, որ ուղածն անում է, ուզողին չէ չի ասում, մէկի տեղ տասնումէկն է տալիս։

Սալոմէ. Բագու շատ կմն միլիօնատէր հարուստներ։

Մալագ. Շա...աա։ Դուք չէք եղել Բագու, Սալոմէ Անդրէևնա։ Համեցէք, էլի կերէք։ Սուրճն էլ, խմեցէք, Այկանուշը չի խմելու, նա արդէն խմել է, դուք խմեցէք։ (Սալոմէն ուտում է)։

—

Հայկանուշ. (Մտնում է, մի ծրար տալիս Մալագին). Ահա քեզ էլ նամակ, դէ գնայ շոկոլադ պատրաստիր։ (Մալագը դուրս է գնում)։

—

Սալոմէ Անդրէևնա, ինչ կը տաք ինձ, որ մինչև մի քանի րոպէ մի լաւ, շատ լաւ, չաղ փեսացուի հետ ձեղ ծանօթացնեմ։ Պարել գիտէք։ Մեզանում հարսնացուն պարելիս է փեսան նրան հաւանում։ Ապա, ինչ պար գիտէք։ Նարգիզի, ռանդի գիտէք։

Սալոմէ. Վունց չէ, ռանդի գիտեմ,

Հայկանուշ. (Դաշնակի տակ նստում է, նւագում պարի դանադան եղանակները) Դէ, Սալոմէ Անդրէևնա, փորձեր անենք մինչև փեսացուի գալը։ Վերկացէք։

Սալոմէ. (Պարելով անծոռնի) Վռնց իմ խաղում։

Հայկանուշ. Սպասեցէք, Մալագին կանչեմ, տեսէք նա ինչպէս է պարում։ (Ձեռներով ինքը պարում է նստած տեղը)։

Սալոմէ. Դանա Մալագը ինձնից լաւ է խաղում. բա. ամենքն ասում ին, վուր 'իս իսաակ պլատոգուս պէս իմ խաղում։

Հայկանուշ. Սուտ են ասում, չը հաւատաք։ (Վեր է կենում և դրանը մօտենալով կանչում) Մալագ, Մալագ, հասիր։

—

Մալագ. (Մտնում է։ Հայկանուշը ձեռից բաշ տալով։ Մալագը չի կարողանում բրթիչը պահել և կիսաձայն ասում է Հայկանուշին) Էլի օյիններ ունես։ Վարպետին կը դայ, կը լարկանայ։ Մարդի-ասելն էլ չի ուզում։ (Ականջին փսփսում է)։

Հայկանուշ. Շատ մի խօսիլ. Սալոմէ Անդրէևնա, մեր Մալագը պարաբաղցու էտիկէտներով է ուզում պարել։ Դուք էլ նոյնպէս կանէք փեսացուի ներկայութեամբ։ (Նւագում է ռանդի, Մալագը պարում է շնորհալի) Ահա այդպէս պարեցէք դուք էլ հետը միասին։ Նայեցէք, կռնկերը ինչ զիզեցիկ է ոլորում, ինչպէս է պոչոյ անում (սկսում է պարել և Սալոմէն)։

Մալագ. (Կանգ առնելով). Հայկանուշ, դու պարիր, Սալոմէ Անդրէևնան տեսնէ։

Հայկանուշ. (Ծարունակելով նազել. Մալագին կիսաձայն) Մարտի-ապօրը կը սատաս, հա, ինչպէս պրիլ եմ։ (Բարձրաձայն) Դէ լաւ, Մալագ, դու գնա շոկոլադիդ հարսիկին։ (Մալագ հաւարելով սեղանից Խասերը, դուրս է գնում)։

—

ՄՈՒՍԱ-ԼԵՌՈՒԸ

Շուշու, Ջիւանշիրի, Զանգազուրի և Գանձակի սովալուկ գաւառները միմեանցից բաժանող սահմանը։

Սալոմէ. Հիմի՞ վունց իմ խաղում։

Հայկանուշ. Ուրեմն վճռած է, կամ չահիլ, անվող, ոռճիկ սուացող, կամ... կամ շատ էլ ոչ չահիլ, բայց, բա... այ... ց...

Սալոմէ. (Ընդհատելով) Հարուստ, հա, հարուստ, համա շատ հարուստ։

Սալոմէ. Օրինակ, ձրքան. Լթէ ասէք ունենայ մի միլիարդ և տարեկան հազար միլիօն եկամուտ, այդպիսի փեսացու թէկուզ իննսուն իննը տարեկան, էլի չի գնալիլ։ (Խորհրդաւոր, բռնում է Սալոմէի ձեռքից) Այ, լաւ լսեցէք և վերջնականապէս վճռեցէք։ Երեսուն տարեկան ինժիներ, երեք հազար մանէթ տարին ոռճիկ և բալախանի տպրելու պայման։ Բաւասուն տարեկան՝ Սև քաղաքում տպրող, հինգ հազար ոռճիկ։ Յիսուն-վաթսուն տարեկան, ինքն ինժիներ, մի քանի տեղ գործ ունեցող՝ տասը հազար մանէթ ոռճիկ։ Վաթսունհինգ (կրմկրմալով), եօթանասուն տարեկան, կէս դիւժին ինժիներներ առաջին կանդնած, Բագու մեծ գրասենեակ, տասնեակ ծառայողներ, հարիւրաւոր բանուորներ, նաւթահորեր Բալախանի, Բիբի-Էյբատի, ծովի վրայ շոգենաւեր, լաւ ամարաթ տուն, տեղ և տարեկան եկամուտ առնւազը...

Սալոմէ. (Ընդհատելով և վեր Ոոչելով տեղից) Մի միլիօն։

Հայկանուշ Այդքանը որ ունի, էլ եկամուտը միևնոյն է, կարող է լինել և մի միլիօն և կէս միլիօն և հինգ միլիօն։

Սալոմէ. Հինգ միլիօն տարէկը... (զարմացած և ապշած) Իհարկէ, նրան գնդիմ, ով ամենքից հարուստ է։

(Կը շարունակուի)

Tiga

ՄԱՅՐԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹՒՆ

ԱՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ

(Լեգենդ.)

Վ. ԴՕՐՕՇԵՒԻՉԻ.

(Նախրում է Վաս. Ի. Նեմիրովիչ-Դանչենկոյին)

—Ներս եկ, Արջունայ այդ տունը, ուր վշտի այդքան տարիներից յետոյ ուրախութիւնն է վերադարձել։

Բենարէսում ժանդպահը խիստ տարաճաշակ էր և մեծ, սարսափելի կատարած էր անուն։ Ժողովուրդը դրսից կոշտած, ողորմ էր և տանջանքների մէջ մեռնում։ Արջունան, դիւցազն քաջ և իմաստուն, հշմարտութեան և մարտի վճռողոյ, սեհնչացող, յոմը քայլերով շրջում էր քաղաքում, և բոլոր անկից հեկեկանք, և լայր լսում սիրելիների մահուան առթիւ։

Ախպէս Արջունան հասու բաջալի ապարանքին, և ուրախ բաջան, հանդիպեց նրան իր տան շէմքում.

—Ներս է՛կ, Արջունայ այդ տունը, ուր վշտի այդքան տարիներից յետոյ ուրախութիւնն է վերադարձել։

—Ուրախութիւն բաջալի տան մէջ, երբ ամբողջ քաղաքը ողորմ և սգում է։

—Ինձ պատ է ծնեալ, Արջունա։

Բաջան որդի ունէր։

Նա արտրդ էր։ Եւ երբ վաղրը նրա աչքերի առաջ պատատուում էր մի որսորդի—նա գոչում էր.

Մի ուրիշի՛ն... մի ուրիշի՛ն դրկեցէ՛ք նրա տեղը։

Բաջալի որդին սպրում էր վարթամ և շուքով, ու ժամանակ կը անց էր կայնում խնջոյքների, խրախճանքների մէջ։ Եւ ծերունի Բաջան, տեսնելով ինչպէս գարնանում, քէֆիը է անում իր որդին, վշտով ու սարսափով համակուած մտածում էր։

—Ուր եմ թողնում ես Բենարէսը։ Ուր եմ թողնում ես Բենարէսին։

Այժմ, երբ „ժողովուրդը սպրում էր տանջանքների մէջ մեռնելով", Բաջալի որդին սարսափից այդ առաջանքներից։

Նա ասաց իր որսորդներին.

—Այժմ որսի ժամանակ չէ։ Մահն է որում մարդկանց։

Նա ասաց իր մերձաւորներին.

—Այժմ խնջոյքների, քէֆերի ժամանակ չէ։ կեբակրեցէ՛ք նրանց, որոնք ուտելու ոչինչ չունեն։

Ահա ինչու ծերունի Բաջան ցնծագին ողջունում էր Արջունային։

—Ես մի որդի ունեմ, արժանաւոր որդի, որին ես կը թողնեմ ինձանից յետոյ հայրերի Բենարեսին։

Ժողովրդի մէջ զարմանքով խօսում էին.

—Նայեցէ՛ք։ Բրամանները իրանց դանձը ապրանքներին են տալիս։

Ժողովրդի մէջ դարձեալ զարմանքով խօսում էին.

Մինչև այժմ ուրիշներին սպանելը իրանց դբաղմունք չէին արել։ Նայեցէ՛ք թէ ինչպէս այժմ, ժանդպահի երեսն գալով, նրանք փոխել են։ Զինւորները դէմուդէմ պանծալի գործեր են կատարում։

Եւ հասարակ սուպրանները սիրով խօսում էին Բրահմուհների հետ,-Հնդկաստանի համար աւելի զարմանալի բան, քան գառնը, որ կը սկսէր փաղաքշանքով մօտենալ վագրին և վագրը նրան կը փաղաքշէր։

Զբաղում ամեն ինչ-մինչին մինչև եղբայրներ ընդհանուր սարսափելի ազէտի դիմաց։

Եւ յիշեցին ժամանակ ամեն տեղ դժբաղտների հառաչանքը, հեծեծանքը և ազազակն էին լսում, իսկ մեռնողների խռռոցը։

Եւ ճշմարտութեան մեծ փնտռողը Արջունան գալով Բենարեսի օսկի տաճարը, դարձաւ դիմեց Սիւա մեծ Աստուծուն։

—Ժանդպահը չարիք, ալէտ չէ։ Իսկ ինչու բացի վշտից նա իր հետ բերեց այնպիսի մեծ երջանկութիւն, որպէս իմաստութիւն, որ-մարդիկ եղբայրներ են։ Այս ինչ էր։ Պատիժ թէ երկնքի շնորհած բարիք։

Եթէ դու կաս, գոյութիւն ունես,-պատասխանի՛ր։ Ինչ հաւատամ ես։ Եթէ դու հեքեաթ չես, պատասխան տուր. ինչ է ճշմարտութիւնը։

Եւ որոտներով պատասխանեց նրան մեծ Մադեւան.

Ուվ, Արջունա, ճշմարտութիւնը մէկ է։ Բայց նա բազմանկիւն, բազմակողմանի է, որպէս լեռների բիւրեղը։ Նայի՛ր այդ բիւրեղին. ինչ գոյն ունի նա։

Ահա վառւում է կայծր, կարմիր, որպէս արիւն։ Ահա կապոյտ կայծ, կարծես երկինքն է։ Ահա կանաչը՝ որպէս գարնան խոտը։ Նա անգոյն է, որպէս ջուրը, կարմիր որպէս արիւնը, կանաչ, որպէս խոտը,-միևնոյն ժամանակ։ Այսպէս է ճշմարտութիւնը, Արջունա։ Դու ցանկանում ես գրել նրան քո տարեգրութեանդ մէջ այնպէս, որպէս նա կայ։ Գրի՛ր բոլորը՝ *հառաչանքները անէծքները, շնորհակալութիւն Երկնքին, մարդկանց սրտերի մէջ բռնկւած, վառւած սէրը դէպի միմիանց,*—և այդ բոլորը միասին, միայն այդ բոլորը միասին, կը լինի ճշմարտութիւնն, Արջունա։ Եւ նա կառկայծի, կը փայլի քո տարեգրութեան մէջ, որպէս առկայծում է լեռնային բիւրեղը,-բոլոր գոյներով։

Ա. Եղիազար.

ԲԵԹՀՈՎԷՆ
29 մարտի 1827 թ. ժաման 80 ամեակի առիթով

ՎԵՐԵՇՉԱԳԻՆ
ժաման երեք ամեակի առիթով

Տ. ՍԻՐՈՆԻՆ
Անդրկաս. երկրում արտիստ. պատրտի առիթով.

ԱՆԴՐԿԱՍՊԵԱՆ ՏԵՍԱՐԱՆՆԵՐԻՑ
Նկար Վերեշչագինի.

ջունվակահար
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՆԱԼԲԱՆԴԵԱՆ
երաժշտ. ուսուցչապետ Ս. Պ. Բուրդի կայսր. կօնսերւատորւմ։ Կովկասում արտիստիկ. պատրտի առիթով.

ՅԻ ՍՈՒՄ ՏԻՎԵՐԻԱԿԱՆ ԼՃԻ ՎՐԱՑ ՔԱՐՈՉԵԼԻՍ.
Նկար Վերեշչագանի.

Պատմական մ. մ/ենտ.

ԼՈՒԻԶ-ԹԱԳՈՒՀԻՆ ԵՒ ՆԱՊՕԼԵՕՆ Ա. ՏԻՐԶԻՏՈՒՄ 1807 Թ.

ՆԱՊՕԼԵՕՆ I-Ի ՀՐԱՇԱՐՈՒՄԸ ԳԱՀԻՑ

Այդ համաշխար[հային] դէպքի մասին հետաքրքիր տեղեկութիւններ է հաղորդում յօրդ Վօլսլէյը, որը քանի տարի ճիւրել է իրան Վաթերլօի կռւի և նրա հետ կատարւող դէպքերի ուսումնասիրութեանը։ Վօլսլէյի կարծիքով, Նապօլէօնը հանճարեղ կերպով էր մտածել այդ պատերազմը և եթէ կայսրին չըխանգարէր հիւանդութեան յանկարծակի սուակութիւնը, անպիտոյիք դիմադրին չէր լինէին... Իսկ Վաթերլօեան ադէսից չորս օր յետոյ կատարւեց մի ամենից դրամատիքական տեսարան, որը չիրաւի, ցոյց էր տալիս ընկած ուժգութեան առաջին անխնայ սաորացումը։ Մինչև այդ ժամանակ նրա դժբախտութիւնը այնեւամենայնիւ կայսրի դժբաղտութիւն էր։ Ճակատագրի անլուր հարուածները, կրկնակի հրաժարման անհրաժեշտութիւնը, քաղաքական ուխտազանցութիւնների ամբողջ շարքը՝ այդ բոլորը դեռ իշխանաւորի տանջանքներ էին, որոնց մէջ ինչ որ ախտանական բան էր նկատւում։ Սակայն այժմ Նապօլէօնի հպարտութիւնն անտանելի կերպով վիրաւորւում էր այն բանից, որ նա զգում էր թէ այլ ևս չէ իշխում օրէնքի վրայ, որ այն ֆօրմուլաները, որոնցով նա դեռ երէկ արտայայտում էր իր կամքի ամենազօրութիւնը, այժմ դարձել էին մեռած տառեր, որ նա էլ կապկապած է նոյն պարտականութիւններով, որոնք խոնարհաբար կրում են միւս մարդիկ, հասարակ մարդիկ... Երբ պատրաստւում էր Թողնել ելիսէյեան պալատը Մալմէզօն գնալու համար, Նապօլէօնը կանչեց իրան հաւատարիմ մնացած գանձապահ բարօն Պէյրուսին և հրամայեց նրան տանալու այն հին 15,150 ֆրանկ արժողութեան բենար, որը դրաւած էր դեռ Նապօլէօն Բօնապարտի անունով։ Սակայն Պէյրուսը ախուր շարժեց գլուխը։

—Բանն ինչումն է,-հարցրեց Նապօլէօնը։

—Ձերդ մեծութիւն... կայսր... ես վախենում եմ, որ տաորագրութիւնը պէտք է հաստատէ նօտարը...

Նապօլէօնը բարկացած թափ տւեց ուսերը։ Չեռնեալ տաւտօտ եկաւ նօտար Նօէլը և յուղմունքից դողդոջուն ձայնով սկսեց կարդալ արձանագրութիւնը.

„Ես նօտար Նօէլս, ըստ ցանկութեան անձնապէս ինձ յայտնի Նապօլէօն Բօնապարտի“...

Նապօլէօնը ձեռքի շարժումով դադարեցրեց ընթերցումը։ Մի խորին մտահոգութիւն սիրեց։ Այդ փոքրիկ բանի մէջ կայսրն զգաց իր անկման ամբողջ խորութիւնը։ Նա, Նապօլէօնը իր անձնաւորութիւնը հաստատելու համար պէտք է դիմէր նօտարին... Նապօլէօնը խլեց գրիչը։ Դա նկատելի կերպով դողում էր նրա մատները։ Նօտարը տւեց նրան փօկումենտը և ցոյց տւեց տաորագրելու տեղը։ Կիսադնդի նախկին սիրապետողը արագութեամբ գրեց իր խառն Map-ը, որը երբեմն սարսում էր դողալ Եւրոպային, բերելով ադդերին կեանք կամ դուշակելով կործանում։ Պէյրուսը վերցրեց թուղթը և անհանդիստ կերպով նայեց տաորագրութեանը։

—Ձերդ մեծութիւն, այստեղ պակաս է...

Նապօլէօնը խլեց փօկումենտը, դրեց, առանց մի խօսք ասելու, ահագին Բ. մի քանի խճբճանքով, և խլխիկոր, բոլորը կրկին տւեց Պէյրուսին։ Դա նրա իսկական հրաժարումն էր կայսրական ախտոռից ու իշխանութիւնից, դրանով նա խոստովանում է իր նոր տարափեզի իրականութիւնը։

Լէոնիդ

Կ. Բ.

Բաղխելով կանգնած եմ քո դռան շէմքին,
Ներս թող ինձ, որ հանգչիմ քո յարկի տակին։
Ես տկար և մերկ եմ, յոգնած և աղքատ,
Ճանապարհը դաժան և հեռու է շատ։
Շրջում եմ աշխարհում անոք, չքաւոր,
Բաղխում եմ դռներ բիւր հազարաւոր։
Ով կըլսէ ձայնս, դուռը կըբանայ,
Եւ իւր մօտ կընդունէ նա հիւր ինձ վաստահ,
Նրա մօտ կըմտնեմ և նրան կըսիրեմ,
Ախորժով նրա հետ և սիրով կընթրեմ։
Եւ թէ թոյլ կամ մենակ, դառն տնանկ ես,
Ինձնից դու նոր ոյժ և ոգի կառնես։
Արցունք կայ աչքերիդ, ես իսկ իմ ձեռքով
Կըսրբեմ շիթերդ գթոտ խնամքով։
Վշտիդ մէջ մխիթար ես քեզ կըլինեմ.
Եւ նստած քեզ հետ սիրով ես կընթրեմ։
Բաղխելով կանգնած եմ քո դռան շէմքին,
Ներս թող ինձ, որ հանգչիմ քո յարկի տակին։

Թարգ. Նիկ. Վ. Տ.-Աւետիքեան

ԿՌՈՒՆԿՆԵՐ

Աշուն է...

Կռունկները թռչում են դէպի հարաւ... նրանց քշում է վրայ հասնող ցուրտը, նրանց գրաւում է հարաւի համայիչ արեգակը։

Եւ նրանք իրանց հզօր թևերով ցնծագին ու վրտտահութեամբ ձեղքում են օդը ու շրջակայքում, հեռու, հեռու տարածւում են նրանց սուր ձայները...

Նրանք գիտեն, նրանք լաւ գիտեն, որ երկար ժամանակով չեն հեռանում այս երկրից...

Կանցնեն ձմեռւայ մրրիկները, ցրտերը, կըգայ շոյիչ գարունը—և նրանք նորից կըթռչեն այս կողմերը և տեսնելով իրանց հին բները՝ կողջունեն նրանց ցընծագին աղաղակներով...

Ես վշտով եմ հետևում թռչունների գաղթին։

Ես ափսոսանքով եմ բաժանւում նրանցից... ես ափսոսում եմ նաև... ինձ.. Չէ՞ որ իմ հոգին էլ ձգտում է դէպի այնտեղ... դէպի հարաւ...

Բայց իմ թևերը կապւած են, չեմ կարող աղատ թռչել դէպի վեր. ինձ վիճակւած է տանել աշնան և ձմրան բուք-բորանի բոլոր սարսափները...

Այո, ինձ համար շատ ծանր է տեսնել, թէ ինչպէս նրանց շարքերը աւելի և աւելի փոքրանում և տարւում են դէպի անհետացող հեռուն։

Գիտեմ, նրանք գարնանը կըվերադառնան... գարնանը, երբ այնպէս պայծառ է փայլում արեգակը, երբ մարդ ուզում է ապրել ու ապրել...

Նրանք իրանց սուր ձայներով ցնծագին կաղմկեն կենդանացող շրջակայքը...

Բայց, արդեօք, ես նրանց կրկին, կըլսեմ, արդեօք, նրանց ձայները... գարնան հովերը ինձ էլ կըշոյեն, արդեօք...

Մ ռաւեան.

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՆԿԱՐԻԶՆԵՐԻ ԸՆԿ. ՊԱՏԿԵՐԱՀԱՆԴԷՍԸ

Իւրաքանչիւր արուեստագէտ, լինի նա նկարիչ, քանդակագործ, երաժիշտ և այլն ազատ է իր աշխատութեան ձևի ու եղանակի նկատմամբ և ոչոք իրաւունք չունի կշտամբել նրան թէ ինչու նրա արտադրութիւնները չեն համապատասխանում այս և այն ժամանակակից պահանջներին ու կապրիզներին։ Ամեն մի արհեստ եթէ բնութիւնից օժտած է սեղծագործական ուժով չանկարող է հպատակել պատահական հրամաններին ու ցանկութիւններին։ Հակառակ դէպքում նրա աշխատութիւնները անխուսափելիօրէն պէտք կրեն վիժմուածքի դրոշմ։

Եթէ նկարչի բնատուրութիւնն ու հակումն այնպէս է իր ընէ ձեակերպած, որ նա իր սիրոյ առարկան գտնում է բացառապէս բնութեան հրաշալիքների մէջ, արդեօք ներելի է նրանից պահանջել, որ պատկերացնի, ցոյց, թալանող ասպատակողների արարքները։

Գեղարուեստական երկը զինուելիս չպէտք է որոնել այս ու այն սիւժէ, բոմանգակութիւն, այլ պէտք է դիտել իրրև լոկ աշխատութիւն՝ թէ ինչպէս է նա կատարած, ինչպէս է հեղինակը բռնել իր վարպետած առարկան և որ ասպիճան հմտութեամբ արտայայտել է կատարվածը։

Գեղարուեստի արժանիքը չի կայանում սիւժէի հարստութեան կամ հետաքրքրական բովանդակութեան մէջ, այլ միմեայն արտայայտելու ոյժի մէջ։ Եւ իրաւ, որ մահկանացուն ընդունակ չէ երևակայելու ամենաֆանտաստիկ կամ ժամանակակից հրատապ պատկերներ։ Ուրեմն պարզ է որ, գեղարուեստագէտի արտադրութիւնը պէտք է քննել ոչ թէ բովանդակութեան այլ արտայայտութեան ձևի տեսակէտից։

Երբէն յայտնի է, որ համաբեայ քսան և հինգ տարի շարունակ Գ. Բաշինջագեանը իր ղրկի մէջ է առել բնութիւնը և հատատարիմ սիրահարի նման, այլ և բաց չի թողնում։ Արևօք անտեսի չէը լինի եթէ մեր կենդանիք ու արտաութիւնք այդպիսի մոնոտանութեան համար, որ նա պահում է իր վրձինը ժամայնելու ներկայ հասարակական և քաղաքական պահանջներին։ Նա իրրև բանաստեղծ, գոյների ներդաշնակութեան միջոցով երգում է իր երգը և մենք, իբրև ունկնդիր, իրաւունք ունենք մեզ առաջադրութեան մասին այս կամ այն ասելու, ուրիշ ոչինչ։

Մենք հարկադրուած ենք այս եզմարտութիւնը կրկնելու այն հանգամանքից դրդուած, որ յաճախ գեղարուեստական կրիտիկաններ արտահայտ արտադրութիւնը քննադատում են այնպէս, ինչպէս հիւանի կամ վիճակագործի աշխատութիւններ։

Ներկայ պատկերահանդէսը որ բացուած է «Ժողովուրդական տան» մէջ, ամառային կրաժոլի դիմաց, պարունակում է իր մէջ երկու հարիւրից աւելի նկարչական գործեր, մինաստիբնեբից սկսած մինչև բաւական մեծաղիր պատկերներ։ Կարելի է այնտեղ տեսնել թէ բնութիւնը իր անվերջ բազմատան գրութեան և լուսաւորութեան միջոցին, թէ կովկասեան տարբեր ազգութեան տիպեր իրենց ազգային տարազով, թէ արևելեան քաղաքների փողոցներ ու կեանքը, թէ այլազանական նկարներ և այլն։

Այդ ցուցահանդէսին մասնակից են Բաշինջագեան, Զանկովսկի, Կանդուրով, Յակոբեան Զամմեր, Թերլեմեզեան, Շուլց, Պաևսկի, Կոլցին, Մխրզոյեան, Կօլօրոմա և ուրիշներ։

Նրանց աշխատութիւնները տարբեր են թէ բովանդակութեան և ոգրդութեան և թէ դեղարուեստական արժէքի կողմից։ Մենք չենք ուզում մատնացոյց անել ամենալաւ կամ ամենավատ աշխատութիւնների վրայ։ Մենք առաջարկում ենք հատարկութեանը այցելել պատկերահանդէսը և դիտել միատի բոլոր նկարները։ Եթէ այցելուն վոքր ի շատ է ինտելիգենտ մարդ է նա անկասկած կրծրանէ պատկերի արժէքը։ Մեր կարծիքով անհրաժեշտ չէ լինել մասնագէտ լաւ վատից դանդատանալու համար։ Եթէ այցելուն ստացել դեղարուեստական երդից այն տպաւորութիւնը, որ հեղինակը ձգտել է մարմնացնել իր աշխատութեան մէջ, անկասկած այդ հեղինակը հասած է իր նպատակին։ Հակառակ դէպքում իրաւացի չէ սպէտի տիտղոս կրելու, եթէ նա արեւեստագէտի աշխատութիւնից ոչ մի բաւականութիւն չի ստանում։

Արեւստագէտ

Կովկասի նահանգի տերահոչակ կառավարչապետ հայ ազգը Սիրիր սքսորելու ժրագրի հեղինակ
ԳՈՒԼԻՑԻՆ

մեռաւ։

ՍՅՒ ԵՒ ՍՅԼՔ

Տեղեկութիւններ այն աշխարհից։ Կարդող է մեռած մարդը իր մասին որևէ տեղեկութիւն տալ իր մերձաւորներին կամ ազգականներին։ Ահա այդ հարցը խիստ զբաղեցրել է Լօնդօնի հոգեբանական ընկերութեանը մանաւանդ Մ. Գ. Մեյերսին։ Հիմնուելով պատմուած մի ամբողջ շարք փաստերի վրայ, իբր թէ այս կամ այն հանգուցեալը մահից յետոյ երևացել է և այս կամ այն խօսքերն արտասանել, Մեյերսը հետևել միջոցն է առաջարկում ուսումնասիրելու համար այն աշխարհից հաղորդուած տեղեկութիւնների դրջը։ Ամեն օր, ով ուզում է անդրզերեզմանական այդ վոձերը կատարել, պարտաւոր է մի կաոը թղթի վրայ գրել մի որևէ կարճ նախադասութիւն, կարճ միտք, որը միմիայն իրան յայտնի լինի, ծրարի մէջ գնի այդ թղթի կտորը, փակի և վրան գրի. «բանալ իմ մահից յետոյ», և մի առանձին բացատրական նամակի հետ միասին ուղարկի Լօնդօնի հոգեբանական ընկերութեանը։

Ընկերութիւնը տեղեկութիւն կըտայ նրան այդ նամակն ստանալու մասին և խորհրդաւոր ծրարը կը պահէ իր արխիւում։ Նամակի հեղինակը միևնոյն ժամանակ պարտաւորւում է իր մահից յետոյ, եթէ միայն հնարաւորութիւն կայ մեռածների համար որևէ մի խօսք արտասանել, կըըկնել այն թղթի կտորի վրայ գրած նախադասութիւնը և ուղարկել նոյն ընկերութեանը։ Սա էլ բանալով ծրարը կըտասւէ թէ ըզդան միանման է նախկին գըրածը նորի հետ։ Այդ պատճառներից միանմանութիւնը ապացոյց կը լինին այն բանին, որ հնարաւոր է յարաբերութիւն հաստատել մեռածների մէջ և զարկ կըտայ հարցի ապագայ պարզաբանութեանը։

Պէտք է նկատել, որ այդ նախագծի հեղինակ Մեյերսը նորերս վախճանուեց։ Իր մահից քիչ առաջ նա ուղարկել էր Լօնդօնի հոգեբանական ընկերութեանը մի վակ ծրար իր պատգամով։ Սակայն մինչև այժմ նա իր մասին ոչ մի տեղեկութիւն չէ ունեցել այն աշխարհից։ Իհարկէ կարելի է, որ դա դեռ կըտապայ։ Յամենայն դէպս սպիրիտիզմի անկարողութիւնը։

ՏԱՓԱԿ ՋՐՈՑՅՆԵՐ

Հիւանդ ամուսինը. Սօնա երբ որ ես մեռնեմ, տես, իմ ընկեր կարտուհին առ, նա լաւ երիտասարդ է։

Կինը. Հանգիստ հղիր, սիրելի, ես էլ այդպէս եմ մտածել դեռ քո առողջ ժամանակը...

*Պապր (Թոռնիկին)–*Թւաբանութիւնից ձրքան էք անցել

*Թոռնիկը –*Շատ, որքան ասէք կարող եմ համարել. հէնց պէսէպ մաղերը. մէկ, երկու, երեք, չորս, հինգ... և վերջացան։

Օրիորդը (ամարանոցում) Այն ինչ թռչուն է երկնքում։

Կաւալերը. Կարծեմ արծիւ է։

Օրիորդը. Ամօթ. որպիսի տգիտութիւն, մի՞թէ չգիտէք, որ արծիւը երկու գլխանի է լինում, իսկ այնտեղ՝ բարձրում թռչողը մի գլուխ ունի միայն։

ԱՂԲԻՒՐ եւ ՏԱՐԱՋ-ԳԵՂԱՓՆՋԻԿ

Հրատարակւում են նոր, բազմաթուանոցակ, աշխատակցութեամբ մեր անւանի մատենադիրների, արուեստագէտների եւ մանկավարժների։

Տպագրւում են ընտիր թղթի վրայ, լուսանկարահանման մեթոդով, կլիշէները պատրաստւում արտասահմանում։

Իւրաքանչիւր ընթերցող իր հարազատ ու անպակասը պէտք է համարի ԱՂԲԻՒՐԸ և ոչ մի ծնող չըզլանայ իւր զաւակին ընծայաբերելու ԱՂԲԻՒՐԸ և իր սեղանի անհրաժեշտ զարդը համարելու ԳԵՂԱՓՆՋԻԿԸ

Տարեկան բաժանորդները ԱՂԲԻՒՐԻՆ և ԳԵՂԱՓՆՋԻԿԻՆ վճարելով 5 ր. (արտասահման 10 ր.) բացի ԱՂԲԻՒՐԸ, ԳԵՂԱՓՆՋԻԿը, կը ստանան յօբելեանական Ալբոմ-Albomեա և շատ ԱՆԱԿԸՆԿԱԼ յանելուածներ, արխիմաներ նման V-ԲԴ ԴԱՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ մեծագիրը պատկերի, որի հատը առանձին արժէ 1 ր. 50 կ.։

Եւ եթէ տարւայ ընթացքում ԱՂԲԻՒՐԻ ու ԳԵՂԱՓՆՋԻԿի բաժանորդները ստանան հէնց առնւազը մի ՀԻՆԳ այդ տեսակ անակնկալ արխիմա, ինչպէս այժմ ստացան, ասել է, թէ նրանք ԱՂԲԻՒՐԸ, ԳԵՂԱՓՆՋԻԿԸ և Յօբելեանական Ալբոմ-Albomեր ստանում են բոլորովին ՋՐԻ։

Հասցէն՝ Тифлисъ. Редакція АГБЮРЪ *կամ* ТАРАЗЪ. Tijlis (Caucase) Rédaction. AGBUR *կամ* TARAZ.

ՄՇԱԿ

(35-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 բուբլի է; տասն և մէկ ամսւանը նոյնպէս 10 ր., տասն ամսւանը՝ 8 ր., ութ և վեց ամսւանոց 6 ր., հինգ ամսւանը՝ 5 ր., չորս ամսւանը՝ 4 ր., երեք ամսւանը՝ 3 ր. յունւար և փետրւար ամիսներին՝ 1 բուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ. Ամէն բիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դօլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 բուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազաբնայա և Բարօնակայա փողոցների անկիւն)։ Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

Կայարանային ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս՝ պէտք է դիմել հետեւեալ հասցէով՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», *իսկ արտասահմանից՝* TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւնները ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԻ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԱՊԱԳԱ

ՕՐԱԹԵՐԹ

Բաժանորդագրվում է՝ Թիֆլիզում և գաւառներում տարեկան 6 ր., մայիսի 1-ից մինչև տարւայ վերջը 5 ր., ամսականն 50 կ., հատով՝ 3 կ.։ Արտասահման՝ տարեկան 20 ֆրանկ, ամսականն 2 ֆր. Պարսկաստան՝ տարեկան 7 ր. ամսականն 70 կ.։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція „Апага“ կամ Tiflis (Russie) Rédaction „Apaga“.

ՅՈՒՇԱՐԱՐ

Թատերական-գրական-գեղարուեստական պատկերազարդ երկշաբաթաթերթ

աշխատակցութեամբ հայ կեանքի գրական-գեղարուեստական յայտնի գործիչների։ Այս տարի տալու է 18 համար, բազմաթիւ պատկերներով զարդարած և լիներ հաս պիէս, որոնք պիտի ծառայեն գիւղական թատրոնին։ Տարեկան բաժանորդագինն է 5 ր. արտասահման 6 ր. 16 ֆր. կամ 3 դոլար։ Բաժանորդները կարելի է վճարել նաև մաս-մաս սկզբից 2 ր. և ապա իւրաքանչիւրը ամէն մի բուբլի մինչև բաժանորդի ամբողջանալը.

դիմել՝ Тифлисъ, Редакція «Ушараръ», Сергѣевская 3. Tiflis, Rédaction du Journal «Houcharar».

Խմբագիր-հրատարակիչ՝ Մարիամ Մելիքեան

Электропеч. Н. Аганьянъ. № 7.

Т-во парфюмерной фабрики
ПРОВИЗОРА
A. M. ОСТРОУМОВА
* КРЕМЪ *
МЕТАМОРФОЗА
ОТЪ ВЕСНУШЕКЪ.
GRAND-PRIX
ВЫСШАЯ НАГРАДА БРЮССЕЛЬ 1905 Г.

Ընկեր. հոտաւէտ գործարանի
պրօվիզօր
Ա. Մ. ՕՍՏՐՕՈՒՄՕՎԱՅԻ
ԿՐԷՄ
ՄԷՏԱՄՕՐՖՕԶԱՅ.
երեսի պէսպէնների դէմ.
CRAHD-PRIX
Բարձր. պար. Բր. 1905 թ.
(10—4)

ՏԱՐԱՋ-ԱՂԲԻՒՐԻ

պատրաստւում վաճառւում են հետեւեալ ընտիր մեծագիր պատկերները.

1. *Յիսուս Քրիստոս տղայութեան հասակում. . . . . 3 —*
2. *Ինֆլենիա, 23 գոյնով տպ. Բերլինում . . . . . 3 —*
3. *Ս. Էջմիածին, տպ. Շտուտգարդում. 1 50*
4. *Ս. Սահակ (տպագր. Լայպ-*
5. *Ս. Մեսրոպ (սիպում . . . 1 50*
6. *Ղեւոնդ երէցը օրհնում է ազատութեան դրօշակակիր Վարդանին տպագր. Պետերբուրգում. 1 50*
7. *Հայոց Հայրիկը Օշականում տպ. Ֆրանկֆուրտում 1 50*

Բոլոր պատկերները միասին փոխանակ 13 ռ. 50 կ., 10 ռ. հանձնարարւում։

Վերոգիր վճարով պատկերներ չեն ընդունւում։

Դիմել՝ Тифлисъ. Редакція *Агбюръ-Таразъ.*

ՕԳՏԻԵՑԷՔ ԴԼՊՔԻՑ ՏՐԻԿՕ

ՊՐԻՄԱ

2ր հատանելու դէպքում յետ է ընդունւում։ Կտաւր սև կամ սև մորթատոյն 4 1/2 արշ. ծղամարդու համար, Լոլգանտ, ամբողջ նադուտացու, որ ուղարկւում է վերադ. վճարով 5ր. 25կ. և ընտիր տեսակը 8ր. 75կ. միանգամից երեք նադուտացու պատիրողներին աստառացուն ձրի է ուղարկւում։

Դիմել фабрика шерстяныхъ издѣлій Т-во ПРОГЕСЪ, ЛОДЗЬ.
(3—1)

ՀԱՅԱՍՏԱՆԱՑԻ ԿԱՆԱՆՑ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ՕՐԱԳԻՐՔ

Հայերէն թիֆլիսի գրքերի, տիպիկ գրքերի, մանրանկարների և Ալբոմների համար 8 ր., ամսական 35 ֆր., ամ. 3 ֆր., Պարսկաստանի—տարեկան 6 թուման—կարճատեւ ամսական 8 կրան։ Տպերն գրքերն է պատրաստում նկարներ 9 ր., ամ. 1 ր., ամսական 80 կ. Հայերէն թիֆլիսի գրքերի, տիպիկ գրքերի, մանրանկարների և Ալբոմների համար 8 ր., ամսական 35 ֆր., ամ. 3 ֆր., Պարսկաստանի—տարեկան 6 թուման—կարճատեւ ամսական 8 կրան։ Տպերն գրքերն է պատրաստում նկարներ 9 ր., ամ. 1 ր., ամսական 80 կ. Հայերէն թիֆլիսի գրքերի, տիպիկ գրքերի, մանրանկարների և Ալբոմների համար 8 ր., ամսական 35 ֆր., ամ. 3 ֆր., Պարսկաստանի—տարեկան 6 թուման—կարճատեւ ամսական 8 կրան։ Տպերն գրքերն է պատրաստում նկարներ 9 ր., ամ. 1 ր., ամսական 80 կ. Հայերէն թիֆլիսի գրքերի, տիպիկ գրքերի, մանրանկարների և Ալբոմների համար 8 ր., ամսական 35 ֆր., ամ. 3 ֆր., Պարսկաստանի—տարեկան 6 թուման—կարճատեւ ամսական 8 կրան։ Տպերն գրքերն է պատրաստում նկարներ 9 ր., ամ. 1 ր., ամսական 80 կ. Հայերէն թիֆլիսի գրքերի, տիպիկ գրքերի, մանրանկարների և Ալբոմների համար 8 ր., ամսական 35 ֆր., ամ. 3 ֆր., Պարսկաստանի—տարեկան 6 թուման—կարճատեւ ամսական 8 կրան։ Տպերն գրքերն է պատրաստում նկարներ 9 ր., ամ. 1 ր., ամսական 80 կ.

ՀԱՅԵՐԷՆ ԹԻՖԼԻՍԻ ԳՐՔԵՐԻ, ՏԻՊԻԿ ԳՐՔԵՐԻ, ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐԻ

Տպերն գրքերն է պատրաստում նկարներ 9 ր., ամ. 1 ր., ամսական 80 կ. Հայերէն թիֆլիսի գրքերի, տիպիկ գրքերի, մանրանկարների և Ալբոմների համար 8 ր., ամսական 35 ֆր., ամ. 3 ֆր., Պարսկաստանի—տարեկան 6 թուման—կարճատեւ ամսական 8 կրան։ Տպերն գրքերն է պատրաստում նկարներ 9 ր., ամ. 1 ր., ամսական 80 կ. Հայերէն թիֆլիսի գրքերի, տիպիկ գրքերի, մանրանկարների և Ալբոմների համար 8 ր., ամսական 35 ֆր., ամ. 3 ֆր., Պարսկաստանի—տարեկան 6 թուման—կարճատեւ ամսական 8 կրան։ Տպերն գրքերն է պատրաստում նկարներ 9 ր., ամ. 1 ր., ամսական 80 կ. Հայերէն թիֆլիսի գրքերի, տիպիկ գրքերի, մանրանկարների և Ալբոմների համար 8 ր., ամսական 35 ֆր., ամ. 3 ֆր., Պարսկաստանի—տարեկան 6 թուման—կարճատեւ ամսական 8 կրան։ Տպերն գրքերն է պատրաստում նկարներ 9 ր., ամ. 1 ր., ամսական 80 կ.

Հասցէն՝ Թիֆլիս, Գրիբոյեդովի փող., տպարան Պայլակ։ № 6. Тифлисъ, Редак. газ. „Пайлакъ“.

Տպարան Ն. Ագանեանց